ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1078-Ա/2 **«12» հուլիսի, 2023 թ.**

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ «POSTDOC» ԾՐԱԳԻՐ 2023» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգ»-ի 11-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20)-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի փետրվարի 9-ի N 218-Ա/2 հրամանը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի մայիսի 10-ի N 634-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2023 թվականի հուլիսի 11-ին կայացած նիստի արձանագրությունը, ինչպես նաև ելնելով 2023 թվականի բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc» ծրագիր 2023» մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2023 թվականի օգոստոսի 1-ից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2023 թ. հուլիսի 12 -ի
N 1078 -Ա/2 հրամանի

ՑԱՆԿ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ «POSTDOC» ԾՐԱԳԻՐ 2023» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ

	Բնագավառ	Ծածկագիր	Ազգանուն անուն	Թեմայի վերնագիր	Կազմակերպություն
1	Պատմություն, հնագիտություն	23PostDoc-6A006	Դավթյան Ռուբեն	Զիավարություն ժամանակի միջով. Հետազոտություններ Հայաստանի երկաթեդարյան ձիերով դամբարանների վերաբերյալ	ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ
2	Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ	23PostDoc-1B009	Հուրոյան Վահան	Տրանսֆորմեր նեյրոնային ցանցերի հիմքով պատկերների սեգմենտացիայի ալգորիթմների վերլուծություն փոքրաթիվ տվյալների դեպքում	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
3	Արվեստագիտություն	23PostDoc-6E003	Զանոնե Ռաֆելե	Պատվիրատուների պատկերները հայկական նկարազարդ Ավետարաններում (9-15-րդ դարեր): Երևանի, Երուսաղեմի, Վիեննայի և Վենետիկի հայկական ձեռագիր հավաքածուների ուսումնասիրություն:	«Մատենադարան» Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամ
4	Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ	23PostDoc-1E001	Նեկրիլով Նիկոլայ	REE-ների ներուժը Հայաստանում Կիրունա տիպի մագնետիտ-ապատիտի հանքավայրում	ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
5	Ֆիզիկա և աստղագիտություն	23PostDoc-1C008	Շվեցով Սերգեյ	Ֆոտոակտիվ փափուկ նյութ. միկրո մասնիկների անուղղակի մանիպուլյացիա հեղուկ բյուրեղների միջոցով	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
6	Ֆիզիկա և աստղագիտություն	23PostDoc-1C002	Չերեպեննիկով Յուրի	3D տպագրությամբ ռենտգենյան պատկերագրման ֆանտոմների ստեղծման գիտատեխնիկական բազայի զարգացում	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
7	Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա	23PostDoc-4D007	Սինխ Աբհիշեկ	Կանաչ նանոտեխնոլոգիաները որպես մշակաբույսերի արտադրության նպատակով գյուղատնտեսական հողերի աղակալումը կանխարգելելու և արդիական էկոլոգիական հիմնախնդիրը լուծելու մոտեցում	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
8	Նյութագիտություն	23PostDoc-2F004	Վասիլև Ալեքսեյ	Էլեկտրոնային կիրառությունների համար քալկոգենի վրա հիմնված նանոկառուցվածքային նյութերի սինթեզ	ՀՀ ԳԱԱ «Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ